

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелік»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհանուր հայոց օրգան:—Ներկին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐ-
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ռուսաստանի մասնակցու-
թիւնը կօնֆերանցիային: Եզրկտոս: Արտաքին լու-
րեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Խամսա-
յի Մէլիքութիւններ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՈՑ ՕՐԴԱՆ

Որքան ժամանակ է հրատարակվում են
հայոց լրագիրներն ու ամսագիրները, բայց
նրանցից ոչ մէկը երբեք չը մտածեց այն-
պէս տանել զործը որ հրատարակվի հա-
մայն հայոց ազգի համար, իր գոյութեամբ
արտայայտութիւն դառնայ բոլոր հայերի
կենսական պահանջներին: Մինչև այժմ ամ-
բողջ հայ մամուլը հրատարակվում էր լու-
սաւորչական հայերի ձեռքով և յատկապէս
հայ լուսաւորչականների համար:

Իսկ այլադասան հայերին հայ մամուլը
ասում էր. «Դուք հայ չէք, քանի որ լու-
սաւորչական չէք, դուք այն ժամանակ մի-
այն հայ կը դառնաք և ուրեմն իրաւունք
կունենաք մասնակցել մեր մամուլի մէջ
ինչպէս և մեր դպրոցներում և մեր այլ ազ-
գային հիմնարկութիւններում, երբ լուսա-
ւորչականութիւնը կընդունէք»:

Այդպիսով այլադասան հայը, յետ մղված
համայն ազգի մտաւոր կենսելի, մտաւոր

գործունէութեան մասնակցութենից, ոչ
գրկում էր հայ թերթին, ոչ էլ աշխատա-
ցում էր մեր մամուլին:

Ինչպէս հայ-լուսաւորչական համայնքի
մէջ ծնվում էին այս կամ այն հասարակա-
կան պահանջները, այնպէս էլ ծնվում էին
այդ պահանջները հայ-կաթօլիկ և հայ-
բողոքական համայնքների մէջ: Բայց հայ-
լուսաւորչականը իրաւունք ունէր յայտնել
իր պահանջները հայոց մամուլի մէջ, իսկ
այլադասան հայը, լուսաւորչականներից
հայ չը համարվելով, համայն ազգի կենսա-
քից յետ մղված լինելով, հեռու էր պա-
հում իրան մեր մամուլի մէջ մասնակցելուց,
չը գիտէր որտեղ գրի, որտեղ արտայայտ
իր կարծիքները, որտեղ յայտնի իր հասա-
րակական պահանջները:

«Մշակը» առաջինն եղաւ որ յայտնեց
այն հասարակ և պարզ միտքը որ քաղա-
քական թերթ իրաւունք չունի այս կամ
այն կրօն ունենալ, կրօնական, աղանդա-
կան թերթ լինել, այլ պէտք է հասա-
րակական օրգան լինի: «Մշակը» իր գոյու-
թեան հիմքը ընդունեց համայն ազգու-
թիւնը և ոչ ազգի մի մասը միայն, թէ-
կող մեծ մասը կազմող դաւանութիւնը:

Եւ ճշմարիտ. ի՞նչ էր լինել, եթէ օրի-
նակի համար, ուստի «Գօլոս» լրագիրը յայտ-
նէր թէ իր խմբագիրը և աշխատակիցները
ուսաւորչական լինելով, նա միւս ուսանե-

րին, աղանդաւորներին, հրէաներին, կա-
թօլիկներին և բողոքականներին ուս չը
համարելով, չէ կարող ապել նրանց թղթ-
թակցութիւնները, չէ կարող իր մօտ աշ-
խատակից ընդունել մի ուս մարդուն, որ
յուսադաւան կրօնին չէ պատկանում: Ընդ-
հակառակն, «Գօլոս» որպէս քաղաքական
օրգան, որպէս հասարակական թերթ, իրա-
ւունք չունի պատկանել այս կամ այն կրօ-
նին, իրաւունք չունի կրօնական, այս կամ
այն դաւանութեանը պատկանող թերթ
լինել իրաւունք չունի որ և է կրօն ունե-
նալ: Եւ միթէ այդ պատճառով մայրաքա-
ղաքի ուս թերթին կարելի է յանդիմա-
նել որ նա կրօնական պրօպագանդայով է
զբաղված և նպատակ է կաթօլիկութեան,
բողոքականութեան և առհասարակ աղանդ-
ների տարածմանը ուս-հասարակութեան
մէջ, ինչպէս որ խոր լռելիա ունեցող մի
քանի հայեր մեղադրում են «Մշակ» լրա-
գիրն, որովհետեւ մենք քարոզում ենք բո-
լոր այլալոյս հայերի միութիւնը ազ-
գային ընդհանրութեան մէջ, հիմնվելով
մայրենի լեզուի վրա և մի և նոյն ժա-
մանակ կրօնական համբերողութիւն քարո-
զելով:

Բայց եթէ խոր լռելիա ունեցողները մի-
ջեւ այժմ մեզ չը հասկացան, կամ ցոյց են
տալիս որ չեն հասկանում, հայոց հասա-
րակութիւնը սկսեց մեզ հասկանալ:

Պիցուք թէ Ալեքսանդրապոլի հայ կա-
թօլիկների կամ Շամախու հայ-աւետարա-
նականների մէջ զարթնում է մի որ և
է հասարակական հարց, — դպրոցնե-
րի կամ ընթերցարան հիմնելու ցան-
կութիւնը, և այլն,—ինչ պէտք է անի
ալեքսանդրապոլի հայ-կաթօլիկը կամ
շամախեցի հայ-աւետարանականը: Նա պա-
հանջ է գրում արծարծել այդ հարցը լը-
րագրութեան մէջ, բայց ինչպէս հայոց
դպրոցների դռները նրա դաւանների առջև
փակված են, նոյնպէս փակված են նրա
առջև և հայոց ազգային մամուլի էջերը:
Եւ ներքին հասարակական հարցը հայոց այս
կամ այն այլադասան համայնքի մէջ մը-
նում էր մինչև այժմ չարծարծված: Մի-
այն այն րօպէկից, երբ «Մշակը» յայտ-
նեց թէ ինքն ազգային թերթ է և իրաւունք
չունի կրօնական թերթ լինել, մեր կաթօլիկ և
բողոքական եղբայրները սիրտ առան, առաջին անգամ սկսեցին մաս-
նակցել ազգային մամուլի մէջ և ահա
այժմ մենք ոչ թէ միայն բազմաթիւ բաժա-
նորդներ ունենք հայ-բողոքականներից ու
հայ-կաթօլիկներից, բայց, որ մեզ աւելի
թանգ է, բազմաթիւ աշխատակիցներ և
թղթակիցներ ունենք այդ դաւանութիւննե-
րին պատկանող ազգայիններից:

Առաջին անգամ, քանի որ գոյութիւն ու-
նի հայոց մամուլը, աշողվեցաւ, վերջապէս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մինչև այստեղ յիշած աղբիւրները դեռ են
տպագրութեամբ լոյս չը տեսած, ձեռագրերի մէջ
մնացածներն էին. այժմ դառնաք ղեկի այն աղ-
բիւրները, որոնք արդէն տպված են:

1) Զ ա մ Է ա ն Կ. Միքայէլ վարդապետ: Պատ-
մութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ-
Տեառն 1784. հատոր III-րդ: Վենետիկ 1786.

2) Ա ռ ա ղ Ե Լ դ ա ռ ի ժ է ց ի: Պատմութիւն
ուսկա դիպուածոց Հայաստանեայց և ես դաւա-
սին Արարատի և մասին Գողթան դաւառի, ըս-
կըսեալ ի Թուոյն հայոց 1054 մինչև յաւարտ
պատմագրութեանս (1601—1666) այլ և ի յի-
շումն անշաղ մասնաւորաբար աստի և անտի:
Ամստերդամ (Ամստերդամ) 1669:

3) Հ ա ս ա ն-Ջ ա լ ա լ ա ն ց Եսայի կաթողի-
կոս Աղուանից: Պատմութիւն կամ յիշատակ ինչ
ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից ի
Թուականին հայոց 1160, իսկ ի Թուականին
Տեառն մնոր Գրիգորի Յիսուսի 1711: Եւսի 1839:
Այդ փոքրիկ գրքից, ինչպէս երևում է, համա-
ռօտութիւն է, քաղած մի ընդարձակ պատմու-
թիւնից, որի իսկականը, եթէ գտնվել, մեծ գանձ
էր կարելի էր համարել մեր նոր ժամանակների
պատմութեան համար: Հեղինակը, Աղուանից Ե-
սայի կաթողիկոսը, ինքը լինելով Վարազդի մէ-
լիքների ապստամբութեան (1700—1728) զխա-
ւոր պարագլուխներից մէկը, գրել է իր ժամանա-
կի անցքերի մանրամասն պատմութիւնը:

4) Դ ա լ ի թ-Բ է Գ. Պատմութիւն Դաւիթ-Բէգին
և պատերազմաց հայոց Խաթանու որը եղին ընդ-
ղեմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի
Տեառն 1722 և հայոց 1171: Վարդապետ 1871:
Այդ հետաքրքիր պատմութեան հեղինակը մինչև
այսօր մնում է անյայտ. ձեռքից ձեռք անցնելով,
հեղինակի անունը եղծվեցաւ: Ես այժմ անտեղի

եմ համարում խօսել այդ մասին, միայն կը յի-
շենք հայկական առաժը. «գողը գողից գողա-
ցաւ, Աստուած տեսաւ, զարմացաւ»...

5) Ա ռ Ե ա մ կ ա թ ո ղ ի կ ո ս կրեանցի:
Պատմութիւն անցիցն իւրոց և Նաղիւր-Հանին
պարսից: Վարդապետ 1870:

6) Գ ի լ ա ն Ե ն ց Պետրոս դի-Մարգիս: Ժամա-
նակագրութիւն 1722—1723: Հայերէն բնագիրը,
որ տպված է եղել Վեդուկի Հայոց աշխարհին
ամսագրի 1863 թիւ տետրակներում, ձեռքի տակ
չունենալով, ես աչքի առաջ եմ ունեցել այդ ժա-
մանակագրութեան Գ. Պատմութեանի ուսանելին
թարգմանութիւնը: Ս. Պետերբուրգ 1870:

6) Ա ռ ղ ո թ Բ ա ն ց - Ե ի կ ա յ ն ա ռ ա ղ ո լ Ե
Յովսէփ արքեպիսկոպոս: Վարաբաղի ժառան-
գական տիրապետողների, որ կոչվում են մէլիք-
ներ, Ռուսաստան դնապաններ ուղարկելու ստի-
պողական պատճառները և նրանց խնդրքը Նո-
րին կայսերական Մեծութեան Պետրոս մեծից:
Այդ հետաքրքիր պատմական գրութիւնը չարա-
ղրված է Ռուսաստանի հայոց վիճակաւոր առաջ-
նորդ Արդութեան-Երկայնաբազուկ Յովսէփ արք-
եպիսկոպոսի աշխատութեամբ և գեներալ Ֆելդ-
մարշալ Իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչ Պոտեմ-
կինի միջնորդութեամբ 1790 թին ներկայացրած
է Եկատերինա II կայսրուհուն: Այդ գրութեան
հայերէն թարգմանութիւնը, Պետրոս մեծի, Եկա-
տերինա II-ի և Պոդոլ Ի-ին Վարաբ. մէլիք.
հնորված նորմատիւնների հետ տպվեցաւ 1858
թիւ Մանդրինանցի «Մեղու Հայաստանի» № 4,
5 համարներում, իսկ ուսանելին բնագիրը կարելի
է գտնել «Собрание актовъ, относящихся къ о-
бозрѣнію исторіи армянскаго народа ч. I, с.
165—201 и ч. II, с. 52—62. Այլ և Տէ. Ար-
քիւն 1823, т. 6. № 10, с. 233: Նոյն Յովսէփ
արքեպիսկոպոսի նոյն թուով (1790—23 յունվա-
րի) կազմած մի այլ գրութիւն այսպիսի վերնա-
գրով «Հայոց տիրապետող իշխանների կամ Վա-
րաբաղի մէլիքներին մասին: Նրանց ա-
նունները և տիրած երկրները: Եւսիվայ իբրա-
նիմանի Եւսիվայ գրաւելու պատճառները»: Այդ

գրութիւնը, որ նոյնպէս իշխան Պոտեմկինի միջ-
նորդութեամբ ներկայացվեցաւ Եկատերինա II
կայսրուհուն, բովանդակում է իր մէջ խմբային
հինգ տիրապետող մէլիքների անունները, նրանց
համառօտ պատմութիւնը ու յարաբերութիւնները
Փանահ-խանի ու Իբրահիմ-խանի հետ: Ռուսերէն
բնագիրը տպված է նոյնպէս «Собрание актовъ,
относящихся къ обозрѣнію исторіи армянскаго
народа ч. II, с. 52—62: Պէտք է ասած, որ
յիշեալ աքաւորի հաւաքած ու ինչ քաղել
եմ Վարաբաղի կաթողիկոսների և մէլիքների
ուսանալ կառավարութեան հետ ունեցած յարա-
բերութիւնների այլ և այլ մանրամասները, սկը-
սեալ 1701—1801 թականը:

7) Ե ի լ ի ց Ե ա ն Ա. Գ. Карабагские мелики въ
Грузіи съ 1800 по 1808 годы. Кав. Стар. 1872,
№ 2: Իր պատմական յօդուածը կազմելու համար
հեղինակը օգտու է քաղել այն տեղեկութիւննե-
րից, որ բովանդակվում են 1—3 հատորների մէջ
Актовъ Кав. Археогр. Ком. և աչքի առաջ է
ունեցել ուրիշ մի քանի աղբիւրներ: Պ. Երկեա-
նի ամսագրի նոյն համարում գտնելված են Յով-
սէփ արքեպիսկոպոսի և Վարաբաղի մէլիքների
մի շարք խիստ հետաքրքիր նամակների ուսանելին
Թարգմանութիւնները:

Ես ձեռքի տակ եմ ունեցել նաև հետեալ
գրքերը. Закавказье отъ 1803—1806 года. Н.
Дубровина, С.-Петербургъ 1866.—Жизнь ге-
нералъ-лейтенанта князя Мадатова, издание
второе, С.-Петербургъ, 1863.—Материалы для
исторіи Кавказа Н. Г. Буткова 3 ч. С.-Пе-
тербургъ 1869: Պէտք է խոստովանել, որ ցան-
կանալով իմ աշխատութեանը տալ, որքան կարի-
կի է հայոց տոհմային պատմութեան, ձեւ, ես
չատ դէպքերում գերադասել եմ այն նիւթերը,
որ յաջողվել է ինձ գտնել հայոց թէ գրաւոր և
թէ բերանայի աւանդութիւնների մէջ, և այս
պատճառով ուսանալ աղբիւրների վրա նայել եմ
որպէս օժանդակող նիւթերի վրա:

Եթէ խմբային մէլիքութիւնների առաջին հա-
տորը ընդունելութիւն գտաւ ընթերցող հասարա-

կութիւնից և տպված գրքերը վաճառվեցան, այն
ժամանակ ես կը տպեմ մի երկրորդ հատոր օր-
պէս յաւելուածք առաջին հատորին: Այդ վերջին
հատորի մէջ գեղեցկված կը լինեն այն բոլոր նիւ-
թերը, որոնք ծառայել են ինձ իբրեւ աղբիւր ա-
ռաջին հատորը կազմելու համար: Բովանդակու-
թիւնը կը լինի հետեալ կարգով. զանազան ան-
ձինքների զանազան ժամանակներում Վարաբաղի
կաթողիկոսների, մէլիքների մասին գրած և ան-
տիպ մնացած պատմական աշխատութիւններ. —
մեր պարբերական հրատարակութիւնների կամ
այլ և այլ գրքերի մէջ ցրված յօդուածները Վա-
րաբաղի մէլիքների մասին. — ուսանող արեւելի մէջ
գտնված տեղեկութիւնները Վարաբաղի մէլիքների
մասին. որպիսի են Կովկասեան հնագրութեան
մասնաժողովի արեւել (Акты Кав. Археогр.
Ком.), Մոսկվայում տպված Հուսեպան արեւելի,
որ վերաբերում են հայոց ազգի պատմութեան
հետազոտութեանը (Собрание актовъ, относя-
щихся къ обозрѣнію исторіи армянскаго на-
рода), ուսանող պատմագրների Սոլովիովի, Բուտ-
կովի, Դուբովինի, Յ. Արարատցիի (հայ) և այ-
լոց գրքերի մէջ գտնված տեղեկութիւնները Վա-
րաբաղի մէլիքների մասին. այլ և պարսից պատ-
մագրութեան մէջ հայոց մէլիքների մասին գտն-
ված տեղեկութիւնները. — ուսանող կայսրների,
պարսից շահերի, վրաց իշխանների և զանազան
խանների Վարաբաղի կաթողիկոսներին ու մէլիք-
ներին հնորված անուանական հրովարտականքի,
ֆիրմանների օրինակները. — մէլիքների տոհմերի
վերաբերութեամբ գտնված արձանագրութիւնների
օրինակները. եկեղեցիների, վանքերի, շիրմների
քարերի վրա, գրքերի իշխատաւարանների մէջ, մէ-
լիքների տոհմային ձեւագրութեան աղիւսակնե-
րը: Այդ բոլորը տպված կը լինեն իմ սեպհական
բացատրութիւններով և ծանօթութիւններով:

Այդ գիրքը կազմելու համար ես ձեռքի տակ
ունեմ բաւական պատրաստի նիւթեր: Անտարա-
կայս, ուրիշների մօտ դուռն գտնվում են և այն-
պիսի թղթեր, որոնք ինձ յայտնի չեն, որոնք ա-
ւելի լոյս կարող էին ձգել մէլիքների դարու պատ-

Միջին փողոց, Կաթօլիչէսկայա փողոցի անկիւն, № 13